



ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԼԱՆՆԵՐՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՆԵՐԱՌՄԱՆ
ՔԱՅԼ-ԱՌ-ՔԱՅԼ
ՁԵՌՆԱՐԿ



Ձեռնարկի մշակողների թիմ՝

Ժաննա Հարությունյան - ՄԱԶԾ «Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման գործընթացներում» ծրագրի պատասխանատու

Արմինե Մխիթարյան - ՄԱԶԾ դասընթացավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- > Ինչ է գենդերային վերլուծությունը և ինչու է այն անհրաժեշտ
- > Գենդերային վերլուծության մեթոդաբանության հակիրճ նկարագրությունը
- > Ձեռնարկի նպատակը և թիրախները



ԳԼՈՒԽ 1. ԽՆԴՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱՉԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՏՆԱԹՂԹԵՐԸ

- > 1.1. ՄԱԿ-ի և ԵՄ կոնվենցիաներն ու հռչակագրերը
- > 1.2. ՀՀ օրենսդրությունը



ԳԼՈՒԽ 2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ՔԱՅԼ-ԱՌ-ՔԱՅԼ)

- > 2.1. Նախապատրաստական փուլ
- > 2.2. Գենդերային վերլուծության իրականացման փուլ
- > 2.3. Գենդերային վերլուծության արդյունքների ներառումը ՏԱՊ-ում
- > 2.4. Մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման փուլ




ԱՄՓՈՓՈՒՄ



ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅՈՒՄՆԵՐԸ



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ (1-8)



Ինչ է գենդերային վերլուծությունը և ինչու է այն անհրաժեշտ

Հասարակության մեջ կանայք և տղամարդիկ ունեն տարբեր դերեր և պարտականություններ, ռեսուրսների և բարիքների տարբեր մատչելիություն, ինչի արդյունքում համայնքում իրականացվող ծրագրերը նրանց վրա ազդում են տարբեր կերպ: Չարգացմանն ուղղված ծրագրերը պետք է հաշվի առնեն այդ տարբերությունները և ներառեն գենդերային մոտեցումներ:

Կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման ոլորտում գենդերային տարբերությունների ուսումնասիրությունը վկայում է, որ գենդերային անհավասարության հիմքը տնտեսական ոլորտում կանանց և տղամարդկանց անհավասար վիճակն է և հասարակության մեջ պահպանվող, ու նույնիսկ ամրապնդվող, գենդերային դերերի ավանդական բաժանումը: Ակնհայտ է, որ նման իրավիճակի փոփոխությունը հնարավոր է միայն հասարակության և համայնքային կառույցների վրա երկարատև ազդեցություն գործող համալիր միջոցառումների իրականացման միջոցով:

Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնախնդիրը, հանրային ոլորտում կանանց հնարավորությունների ընդլայնումն այն հիմնական ռազմավարական նպատակներն են, որոնք ընդգրկված են ինչպես միջազգային (Պեկինյան գործողությունների ծրագիր, Հազարամյակի զարգացման նպատակներ և ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա), այնպես էլ տեղական (ՀՀ կառավարության 2019-2023թ. գործունեության ծրագիր, «Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 2010թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված Գենդերային քաղաքականության հայեցակարգ, 2013թ. ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք) փաստաթղթերում:

Յուրաքանչյուր հասարակությունում հավասարակշռված գենդերային իրավիճակի հաստատումն ու կառավարումը հնարավոր է որակյալ գենդերային վիճակագրության առկայության դեպքում:

Ցանկացած ոլորտում լավ քաղաքականություն/ծրագիր մշակելու համար ՏԻՄ-ը պետք է հստակ իմանա, թե ովքեր են ապրում համայնքում, ինչով է զբաղված համայնքի բնակչությունը, որքանով են կանայք և տղամարդիկ, ինչպես նաև՝ խոցելի խմբերի ներկայացուցիչները, ներգրավված համայնքային կյանքում:

Քաղաքականություն/ծրագրեր մշակողները պետք է տեղյակ լինեն համայնքում ապրող տղաների և աղջիկների, տղամարդկանց և կանանց հոգսերին ու կարիքներին, ինչպես նաև այն խնդիրներին, որոնց առնչվում են տարբեր սեռերի ներկայացուցիչները՝ պայմանավորված իրենց սոցիալական կարգավիճակով և/կամ խոցելիությամբ:

Սա նշանակում է, որ յուրաքանչյուր համայնք պետք է հավաքի ու վերլուծի վիճակագրական որոշակի (գենդերային տարաբաժանված) տվյալներ, որոնք հետագայում կօգտագործվեն հիմնական խնդիրները մատնանշելու ու դրանց հնարավոր լուծումները գտնելու, համայնքի առաջնահերթությունները որոշելու, գենդերային զգայուն ծրագրեր իրականացնելու և դրանց իրականացումը գնահատելու նպատակով:

Կատարյալ տարբերակում համայնքի վիճակագրական տվյալները պետք է տեղեկատվություն ներառեն համայնքում ապրող տղամարդկանց և կանանց մասին, ինչպես նաև (բայց ոչ միայն) հետևյալ ցուցանիշները.



- տարիք, կրթություն, գործունեության տեսակ, ամուսնական կարգավիճակ
- համայնքային ծրագրերին մասնակցություն
- խոցելի խմբեր, ներառյալ՝ էթնիկ և կրոնական փոքրամասնություններ, փախստականներ, միաձևող ընտանիքներ, գործազուրկներ, աղքատներ, տարեց մարդիկ (հատկապես՝ միայնակ ապրող տարեցներ), հաշմանդամություն ունեցող անձինք:

Վիճակագրական տվյալներ հավաքելուց հետո՝ հարկավոր է վերլուծել համայնքում տիրող գենդերային իրավիճակը:

Գենդերային վերլուծությունը նշանակում է տեղեկացված լինել, թե ինչով են զբաղված համայնքում ապրող կանայք և տղամարդիկ (ներառյալ վարձատրվող և չվարձատրվող աշխատանքները), ինչպիսի ռեսուրսների են նրանք տիրապետում և ինչ է նրանց հարկավոր:

Այսպիսի վերլուծություն իրականացնելու համար պետք է լավ ճանաչել համայնքը: Պետք է խոսել համայնքի բնակիչների հետ՝ նրանց հրավիրելով ավագանու նիստերին կամ դռներում անցնելով:

Համայնքի ղեկավարների կողմից գրանցվող տեղեկատվության բնույթը կարող է փոփոխվել՝ ըստ յուրաքանչյուր համայնքի առանձնահատկությունների:

Գենդերային վերլուծության մեթոդաբանության հակիրճ նկարագրությունը

Համայնքներում գենդերային վերլուծության բացը լրացնելու և համայնքային ՏԱՊ-րում այն ընդգրկելու նպատակով՝ 2018թ. ՄԱԿ-ի «Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» ծրագրի շրջանակներում մշակվել է հատուկ մեթոդաբանություն, որն իր մեջ ներառում է գենդերային վերլուծության 6 տարբեր ձևաչափեր՝ աղյուսակների տեսքով:

Այդ ձևաչափերի մշակման համար հիմք են հանդիսացել մի շարք միջազգային և տեղական կյուբեր (ինչպիսիք են, օրինակ՝ **Руководство по гендерно-чувствительным индикаторам**¹, **Gender statistics and indicators**², «Կայուն զարգացման ծրագրի մշտադիտարկման գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ» մեթոդական ձեռնարկը³, «Ինչպես հաշվի առնել կանանց և տղամարդկանց (գենդերային) շահերը համայնքային պլանավորման մեջ» ձեռնարկը⁴), որոնցում հիմնավորվում է գենդերային վիճակագրության ու գենդերային վերլուծության անհրաժեշտությունը՝ թե պետական, թե տեղական մակարդակներում, և առաջարկվում է գենդերային վերլուծության համար կիրառել ստորև ներկայացված հիմնական հարցերն ու ցուցանիշները:

¹ Руководство по гендерно-чувствительным индикаторам. Канадское агентство международного развития, Москва, «Эслан», 2001.

² Gender statistics and indicators. European Institute for Gender Equality, 2019.

³ Կայուն զարգացման ծրագրի մշտադիտարկման գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ: Մեթոդական ձեռնարկ: Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, Համաշխարհային Բանկի աջակցությամբ, Երևան, 2011:

⁴ «Ինչպես հաշվի առնել կանանց և տղամարդկանց (գենդերային) շահերը համայնքային պլանավորման մեջ» ձեռնարկ: Կովկասի ինստիտուտ, Երևան, 2013:

Գենդերային վերլուծության համար անհրաժեշտ հիմնական հարցերը



Դաշտ	Նկարագրություն
<p>Գործունեություն</p>	<ul style="list-style-type: none"> • Ի՞նչ են անում կանայք և տղամարդիկ համայնքում: Ստանու՞մ են, արդյոք, դրա դիմաց աշխատավարձ (օրինակ՝ աշխատանք դպրոցում, քաղաքապետարանում, բանկում և այլն), կամ՝ ստանում դրանից եկամուտ (օրինակ՝ սեփական բիզնես, գյուղատնտեսական ապրանքի արտադրություն և վաճառք), թե՞ դա չվարձատրվող աշխատանք է (օրինակ՝ տնային տնտեսուհու աշխատանք, երեխայի խնամք, կամավորի աշխատանք): Անում են դա տա՞նք, թե՞ դրսում: • Ե՞րբ են նրանք իրականացնում այս գործունեությունը (քանի՞ ժամ - օրական/տարեկան): • Կատարելով այս աշխատանքը՝ դիմու՞մ են որևէ ռիսկերի (առողջական, ֆիզիկական): • Ո՞րն է աշխատանքի գենդերային բաժանումը: Ի՞նչ են անում հիմնականում/միայն կանայք, և ի՞նչ են անում հիմնականում/միայն տղամարդիկ: • Ի՞նչ են անում խոցելի խմբերի ներկայացուցիչները: Ինչո՞վ է դա տարբերվում մյուսների արածից: Ի՞նչ էին անում կանայք և տղամարդիկ համայնքում (օրինակ՝ ԽՍՀՄ-ի ժամանակ, պատերազմից առաջ, մինչև ֆինանսական մեծ ճգնաժամը): Փոխվե՞լ է դա: Ինչպե՞ս է այս փոփոխությունը ազդել տղամարդկանց և կանանց վրա:
<p>Ռեսուրսներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ի՞նչ ռեսուրսներ են տղամարդիկ և կանայք օգտագործում իրենց գործունեության մեջ (հող, փոխադրամիջոց, ճանապարհներ, հաղորդակցություն, ենթակառուցվածք, ֆինանսական միջոցներ, վարկեր, կրթություն): • Կորցրե՞լ են նրանք, արդյոք, այս ռեսուրսներից որևէ մեկը (օրինակ՝ ԽՍՀՄ փլուզման, պատերազմի, ճգնաժամի հետևանքով): • Կառավարու՞մ են, արդյոք, տղամարդիկ ու կանայք այս ռեսուրսները և ունե՞ն հնարավորություն որոշելու, թե որտեղ և ինչպես օգտագործեն դրանք:



<p>↓</p>	<ul style="list-style-type: none"> • Ո՞վ կարող է օգտագործել այս ռեսուրսները: Որոշ մարդկանց համար այս ռեսուրսներն ավելի հասանելի են: Եթե այո, ապա ինչու՞: • Կառավարում են, արդյոք, տղամարդիկ ու կանայք այս ռեսուրսները և ունեն հնարավորություն որոշելու, թե որտեղ և ինչպես օգտագործեն դրանք: • Ո՞վ կարող է օգտագործել այս ռեսուրսները: Որոշ մարդկանց համար այս ռեսուրսներն ավելի հասանելի են: Եթե այո, ապա ինչու՞:
<p>Կարիքներ</p>	<ul style="list-style-type: none"> • Որո՞նք են համայնքում տղամարդկանց և կանանց ամենից հրատապ կարիքները: • Ինչպե՞ս կարելի է հոգալ այս կարիքները: • Ո՞ր կարիքները կարելի է հոգալ հենց համայնքում: • Ինչպիսի՞ օգնություն է հարկավոր համայնքին այս կարիքները հոգալու համար (օրինակ՝ թրեյնինգ, ֆինանսավորում, խորհրդատվություն և այլն):

Նոր մշակված ձևաչափերում վերը նշված աղյուսակի դաշտերը նկարագրող հարցերը տրոհվել են՝ դառնալով լրացման ենթակա առանձին աղյուսակներ, մասնավորապես՝ ընդլայնվել է պահանջվող տեղեկատվության ծավալը, մատնանշվել են տեղեկատվության հավաքագրման հնարավոր աղբյուրները, աղյուսակները ավելի հստակեցվել ու դյուրինացվել են լրացման համար (**տե՛ս Հավելվածներ 1-6-ը**):

Նոր ձևաչափերը թույլ են տալիս պատկերացում կազմելու, թե համայնքապետարաններն ինչպիսի տեղեկատվության են տիրապետում, ինչպիսի լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեն և որտեղից (ինչ աղբյուրներից) դա կարող են ստանալ, ինչպես նաև հասկանալու, թե որքան կարևոր է գենդերային վերլուծությունը՝ ՏԱՊ-ը մշակելիս:

Նշված մեթոդաբանությունը ներդնելու և այն մասնակցային դարձնելու նպատակով (ինչը պետք է օրինակ ծառայի նաև համայնքապետերի համար՝ ՏԱՊ-ի մշակման գործընթացը հնարավորինս մասնակցային դարձնելու առումով)՝ կազմակերպվել և անցկացվել են հատուկ դասընթացներ՝ 2018թ. Արենի, Գորիս, Ջերմուկ և Չառիթափ, 2019թ.՝ Արենի, Գլաձոր, Ամասիա, Սարապատ, Ախուրյան, Մարմաշեն, Վարդենիս, Ճամբարակ և Շողակաթ բազմաբնակավայր համայնքների ներկայացուցիչների հետ (համայնքի ղեկավարներ, վարչական ղեկավարներ, ՏԱՊ-ի մշակման պատասխանատուներ, ավագանու անդամներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ, ակտիվ բնակիչներ):

2019 թվականին սույն մեթոդաբանությունը կիրառվել է Արենի, Գլաձոր, Ամասիա, Սարապատ, Ախուրյան, Մարմաշեն, Վարդենիս, Ճամբարակ և Շողակաթ բազմաբնակավայր համայնքներում՝ համայնքի ՏԱՊ-ը գենդերազգայուն դարձնելու նպատակով:



Սույն ձեռնարկի նպատակներն են

Ամփիջական/ուղղակի նպատակները

1. Նպաստել համայնքի զարգացման ծրագրերի գեղեցիկագայուն պլանավորմանը և դրանց արդյունքների չափելիությանը:
2. Նպաստել համայնքային մակարդակում գեղեցիկագայուն և տարաբաժանված ցուցանիշների մշակման մեթոդաբանության ներդրմանը:
3. Նպաստել համայնքային մակարդակում (հատկապես՝ բազմաբնակավայր համայնքներում) սեռատարիքային/գեղեցիկագայուն տարաբաժանմամբ տվյալների հավաքագրման մշակույթի ձևավորմանը:


Միջնորդավորված նպատակը

1. Ձեռնարկի և գործնական աշխատանքների հիման վրա մշակել նվազագույն սեռատարիքային (գեղեցիկագայուն տարաբաժանված) տվյալների խումբ, ինչը կաջակցի համայնքներին վերլուծական տեղեկատվության հավաքագրմանը և ավելի թիրախային ՏԱՊ-եր և հնգամյա զարգացման ծրագրեր մշակելուն:

Սույն ձեռնարկը նախատեսված է.

- ✓ համայնքների ղեկավարների համար
- ✓ աշխատակազմերի քարտուղարների համար
- ✓ ֆինանսիստների/հաշվապահների համար
- ✓ առհասարակ, ՏԱՊ-երի և հնգամյա զարգացման ծրագրերի մշակման պատասխանատուների համար:





ԳԼՈՒԽ 1.

ԽՆԴՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ



1.1. ՄԱԿ-ի և ԵՄ կոնվենցիաներն ու հռչակագրերը

1993 թվականին, Հայաստանի ՄԱԿ-ի անդամ դառնալուց հետո, օրենսդիր իշխանությունը վավերացրել է «**Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան**, որը պարտավորեցնում է այն վավերացրած բոլոր պետություններին ամրագրել տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքը սահմանադրություններում և այլ օրենսդրական ակտերում ու հասնել դրա գործնական իրականացմանը:

Պեկինյան հռչակագիրը և Պեկինյան գործողությունների ծրագիրը (1995թ.) վեր են հանում գլխավոր հիմնախնդրային ոլորտները, որտեղ նշվում է «գենդերը օրենսդրության, հասարակական քաղաքականության մեջ, ծրագրերում և նախագծերում ներդնելու անհրաժեշտությունը», ինչպես նաև «ազգային մեխանիզմների և պետական այլ կառույցների ստեղծման կամ ուժեղացման» և այդ կապակցությամբ «բարեփոխումների իրականացման գործընթացի մշտադիտարկման համար բավարար ռեսուրսների բաշխման» անհրաժեշտությունը:

Հազարամյակի զարգացման նպատակները մշակվել են Հազարամյակի հռչակագրի (2000թ.) հիման վրա, որը մեկ անգամ ևս հաստատում է գենդերային հավասարության դերի կարևորությունը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիայում նույնպես ամրագրված է սեռի հատկանիշով պայմանավորված խտրականության բացառումը:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան Եվրոպայի խորհրդի անդամներ հանդիսացող Կառավարությունների համար (որոնցից մեկն էլ Հայաստանն է) հաստատում է առանց սեռական խտրականության սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքը, աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը, աշխատանքում արժանապատվության իրավունքը, ընտանեկան պարտավորություններով աշխատողների հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը:

1.2. ՀՀ օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետությունը ֆորմալ իրավաբանական տեսանկյունից վավերացրել է գենդերային ուղղվածության գրեթե բոլոր միջազգային իրավական ակտերը և որպես ՄԱԿ-ի ու Եվրախորհրդի անդամ և Եվրոպայի ինտեգրմանը միտված անկախ պետություն, ստանձնել է որոշակի պարտավորություններ՝ ոչ միայն վավերացնել միջազգային կարևորագույն իրավական փաստաթղթերը, այլև համաձայնեցնել ազգային օրենսդրությունն այդ փաստաթղթերի դրույթներին:

Ելնելով վերոհիշյալ պարտավորություններից, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ամրագրման սկզբունքից, հանրապետությունում անկախացումից հետո իրականացվել և շարունակվում են իրականացվել օրենսդրական դաշտի բարեփոխումներ:

2010թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից ընդունված Գենդերային քաղաքականության հայեցակարգը սահմանում է կանանց և տղամարդկանց նկատմամբ պետա-

կան քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու ընդհանուր ռազմավարությունը և ուղղված է *հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ անկախ սեռից:*

Հայեցակարգը հիմնված է ՀՀ Սահմանադրության և ՀՀ օրենքների, Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի, ինչպես նաև ուղղորդիչ այլ միջազգային քաղաքական փաստաթղթերի վրա: Հայեցակարգի հիմքում ընկած է այն գաղափարը, որ *ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության ճանապարհան ճանապարհը գենդերային հավասարությունն է, որը ժողովրդավարական գերակա արժեք է, մարդու հիմնարար իրավունքներից մեկը և սոցիալական արդարության հասնելու ճանապարհան:*

Գենդերային հավասարությունը նպաստում է երկրի կայուն զարգացմանը, ժողովրդավարական գործընթացների խորացմանը և հասարակության կենսագործունեության կազմակերպմանը՝ բոլոր սոցիալական խմբերի իրական հավասարության, համերաշխության, համագործակցության և հանդուրժողականության հիման վրա, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործմանը և կյանքի որակի բարձրացմանը:

2015թ. փոփոխված ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսված է առանձին դրույթ կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին, ինչպես նաև՝ առանձին դրույթ սեռի հատկանիշով պայմանավորված խտրականության արգելման վերաբերյալ:



Հոդված 28. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը՝ կախված **սեռից**, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները

Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1. գործարար միջավայրի բարելավումը.
2. բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը.
3. բնակարանային շինարարության խթանումը.
4. **կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը.**
5. երեխաների անհատականության, նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված «խտրականությունը, կախված սեռից» նորմը կարգավորվում է «**Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին**» **ՀՀ օրենքով**, որի նպատակն է *հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը*, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը: Օրենքի խնդիրներն են ապահովել կանանց և տղամարդկանց՝



1. իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության իրական հավասարությունը, նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքը և խտրականության բացառումը.
2. **հնարավորությունների հավասարությունը.**
3. **արդյունքի հավասարությունը:**

Օրենքում սահմանվում է **գենդերային խտրականությունը (ուղղակի, անուղղակի)**՝ սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը աշխատանքային հարաբերություններում արգելում է խտրականությունը, որևէ տեսակի հարկադիր աշխատանքը և աշխատակիցների հանդեպ բռնությունն ու սեռական հետապնդումները:

Օրենքների ընդունմանը զուգահեռ մշակվել են նաև ենթաօրենսդրական ակտեր, որոնք ապահովում են այս կամ այն օրենքի կիրարկումը:

Սակայն ազգային օրենսդրության բարեփոխումների այս գործընթացը դեռևս չի հանգեցրել կանանց և տղամարդկանց փաստացի հավասարությանը, քանզի հռչակել իրավահավասարություն, դեռ չի նշանակում ապահովել դրա փաստացի իրականացումը: Վերապահվող իրավունքներն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են:


Փաստացի իրավահավասարությունը չափվում է ձեռք բերվող արդյունքներով, որոնք ենթադրում են ոչ միայն հավասար իրավունքների հռչակում, այլև հավասար հնարավորությունների ընձեռում և ռեսուրսների հավասար մատչելիություն: Բացի այդ, ներկայացուցչական ժողովրդավարությունը թելադրում է հասարակության բոլոր սոցիալական խմբերի և խավերի հավասար մասնակցություն պետության և համայնքի կառավարմանը: Իսկ տղամարդկանց և կանանց հավասար մասնակցության ապահովումը դիտվում է որպես ժողովրդավարացման գործընթացի անբաժանելի մաս:

Որպես ճիշտ ռազմավարական որոշումներ կայացնելու նախապայման՝ անհրաժեշտ է մշակել և ներդնել գենդերային զգայուն մշտադիտարկման ցուցանիշների համակարգ՝ համայնքային ծրագրերի արդյունավետության, երկու սեռերի համար հավասարապես հասանելիության և մատչելիության գնահատման, համայնքային ծրագրերի հասցեականության ապահովման նպատակով:

Միաժամանակ, անհրաժեշտ է նաև իրականացնել որակյալ, գենդերային տարաբաժանումն ապահովող, վիճակագրական տվյալների հավաքագրման համար համապատասխան

ձևաչափերի և մեթոդաբանության մշակում ու ներդրում, ինչը որակյալ վիճակագրական հաշվետվություններ օգտագործելու միջոցով կհզորացնի համայնքապետարանների մշտադիտարկում իրականացնելու կարողությունները: Մինչդեռ գենդերային տարաբաժանված վիճակագրական տվյալների և գենդերային մշտադիտարկման բացակայությունը թույլ չի տալիս կայացնել լիարժեք որոշումներ և բարելավել համայնքային ծրագրերի հասցեակա-
նությունը:





ԳԼՈՒԽ 2.

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՓՈՒԼԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(ՔԱՅԼ-ԱՌ-ՔԱՅԼ)





Առաջարկվող ձեռնարկը գեղեցիկ է զգայուն ցուցանիշների կիրառման անհրաժեշտությունը հիմնավորող և համայնքում գեղեցիկ ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության չափման անհրաժեշտ գործիքների նկարագրությունն է:

Ձեռնարկում նշվում է, թե ինչպես կարելի է ճիշտ և արդյունավետ կիրառել գեղեցիկ ծրագրերի զգայուն ցուցանիշները ՏԱՊ-երի մշակման գործընթացներում, որպեսզի գնահատող այլ տեխնիկաների հետ համատեղ հնարավոր լինի բացահայտել երկու սեռերի ինտեգրման աստիճանը համայնքային կյանքի բոլոր ոլորտներում:

Ձեռնարկը չի հավակնում տալ ցուցանիշների հետ կապված բոլոր հարցերի պատասխանները: Այն մշակված է որպես մի փաստաթուղթ, որը երաշխավորում է ՏԱՊ-ում ցուցանիշների այնպիսի կիրառումը, որ հնարավոր լինի բացահայտել և վերլուծել համայնքում առկա գեղեցիկ իրավիճակը: Արդյունքում, հնարավոր կլինի համայնքում իրականացնել գեղեցիկ ծրագրերի զգայուն և հավասարակշռված ծրագրեր:

2.1. Նախապատրաստական փուլ

Ելնելով վերը նշվածից, մանրամասն ուսումնասիրվել են համայնքապետարանների կողմից լրացվող ՏԱՊ-երի բոլոր բաժինները՝ դրանցում գեղեցիկ ծրագրերի տարաբաժանված տվյալները ընդգրկելու հնարավորության և դրանց նպատակահարմարության տեսանկյունից:

Այսպիսով, ՏԱՊ-ը բաղկացած է հետևյալ բաժիններից (աղյուսակներից).



1. Ներածություն
2. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները
3. Համայնքի ոլորտային նպատակները, որոնք բաղկացած են 6-7 ոլորտներից
4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով՝ ըստ վերը նշված 6-7 ոլորտների
5. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով
6. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (նախատեսվող ոլորտային ծրագրերի բացվածքների ներկայացմամբ՝ ծրագրի ամփոփ նկարագիրը, նպատակները, արդյունքային ցուցանիշները, տեղեկատվության աղբյուրները, պատասխանատուները, իրականացման ժամկետները, ռիսկերը)

7. Համայնքի գույքի կառավարման տվյալ տարվա ծրագիրը
8. ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների
9. Համայնքի ՏԱՊ-ում ներառված ծրագրի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը՝ ըստ ոլորտների:

ՏԱՊ-ի մշակման գործընթացի մասնակիցներ կարող են (կամ պետք է) լինեն.



- ՏԻՄ-ը
- Հասարակական կազմակերպությունները
- Տարբեր բնագավառների մասնագետները/փորձագետները
- ՉԼՄ-ները
- Բնակիչները (և՛ կանայք, և՛ տղամարդիկ, և՛ խոցելի խմբերի ներկայացուցիչները):

ՏԱՊ-ի մշակման գործընթացի բոլոր փուլերում առաջարկությունների փաթեթի ստեղծումից մինչև ծրագրային առաջարկները, ծրագրերի քննարկումներից մինչև իրականացման մշտադիտարկումը, ծրագրերի կատարողականի հաշվետվությունից մինչև հասարակության գնահատականը և հրապարակումը, հնարավոր են համագործակցության (մասնակցայնության ապահովման) հետևյալ ձևերը.



- համատեղ աշխատանքային խմբեր
- հանձնաժողովներ
- հանրային լսումներ
- սեմինարներ
- ֆոկուս խմբային քննարկումներ
- հարցումներ (այդ թվում՝ առցանց) բնակչության շրջանում:

2.2. Գենդերային վերլուծության իրականացման փուլ

Գենդերային վերլուծությանը ներկայացվող կարևորագույն պահանջ է **օպերատիվությունը**: Հանրապետությունում տեղի ունեցող տնտեսական և սոցիալական անընդհատ փոփոխությունները ուղեկցվում են գենդերային նոր հիմնախնդիրների առաջացմամբ, որին նպաստում են նաև օրենսդրության փոփոխությունները: Նման իրավիճակում դժվարությունների, որոնց բախվում են կանայք և տղամարդիկ, վերաբերյալ օպերատիվ և համարժեք տեղեկատվության բացակայությունը կարող է խոչընդոտ լինել գենդերային հիմնախնդիրների լուծման վերաբերյալ վարչական և քաղաքական որոշումների, ծրագրերի և միջոցառումների մշակման և արդյունավետության գնահատման գործընթացներում:

Վիճակագրության մեջ կանայք և տղամարդիկ պետք է **«տեսանելի»** լինեն: Վիճակագրությունը պետք է արտահայտի կանանց և տղամարդկանց տեղն ու դերը հասարակությունում՝ հաշվի առնելով իրենց որպես սոցիալ-ժողովրդագրական առանձնահատուկ խմբերի, ինչպես նաև հասարակության մեջ կանանց և տղամարկանց համար առկա տարբեր սոցիալ-տնտեսական իրողությունները: Այն նպատակ ունի չեզոք հիմքեր սահմանել սեռային հավասարության և կանանց հնարավորությունների ընդլայնման ճանապարհին համեմատություններ կատարելու և առաջընթացը գնահատելու համար: Բացի այդ, ներկայացված տվյալները պետք է լինեն համապարփակ և դյուրընթեռնելի:

Գենդերային վիճակագրությունը/վերլուծությունը ապահովելու նպատակով առավել արդիական և արդյունավետ է դառնում գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցանիշների կիրառումը: Գլխավոր ռազմավարությունը, որը հիմնված է հենց նման ցուցանիշների հավաքագրման վրա, բաղկացած է քանակական և որակական ցուցանիշների հավաքագրման համակցված մեթոդից, որը հնարավորություն է տալիս ժամանակի ընթացքում չափելի դարձնել հասարակության մեջ տեղի ունեցող գենդերային փոփոխությունները:



Ցուցանիշ` քանակական կամ որակական բնույթի գնահատման գործոն: Ցուցանիշը կարող է լինել չափող գործիք, թիվ, փաստ, կարծիք կամ դատողություն, որը ցույց է տալիս յուրահատուկ կարգավիճակ կամ իրավիճակ և ամրագրում է ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները այդ կարվգավիճակում կամ իրավիճակում:

Ցուցանիշների ընտրության չափանիշներն են.



- Ցուցանիշների մշակմանը պետք է մասնակցեն բոլոր շահագրգիռ կողմերը.
- Ցուցանիշները պետք է համապատասխանեն օգտագործողների կարիքներին.
- Ցուցանիշները պետք է լինեն տարաբաժանված ըստ սեռի.
- Անհրաժեշտ է օգտագործել և քանակական, և որակական ցուցանիշներ.
- Ցուցանիշները պետք է լինեն հասկանալի և պարզ ձևակերպված.
- Ցուցանիշները պետք է լինեն հավաքագրելի.
- Անհրաժեշտ է սահմանել և պահպանել ցուցանիշների հավաքագրման պարբերականությունը.
- Հիմնական ուշադրությունը պետք է դարձնել արդյունքը չափող ցուցանիշների վրա:



> **Քանակական ցուցանիշը**

բնորոշվում է որպես քանակի չափման միավոր, ինչպես, օրինակ, բնակչության թվաքանակը, հաշմանդամություն ունեցող զբաղվածների թվաքանակը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվաքանակը և այլն:

> **Որակական ցուցանիշը**

բնորոշվում է որպես տվյալ առարկայի կամ խնդրի վերաբերյալ մարդկանց դատողությունները կամ պատկերացումները, ինչպես, օրինակ, որևէ ծառայությունից օգտվողների գոհունակությունը կամ դժգոհությունը ծառայության որակից:

Քանակական և որակական ցուցանիշների էական տարբերությունը նրանում է, որ դրանք ստացվում են տեղեկատվական տարբեր աղբյուրներից:

Քանակական ցուցանիշները հեշտ չափելի են, քանի որ ստացվում են պաշտոնական աղբյուրներից՝ ինչպես, օրինակ, մարդահամարի տվյալները, տարբեր վարչական հաշվետվությունները և այլն:

Որակական ցուցանիշներն արտահայտում են մարդկանց տարբեր ընկալումները, դիրքորոշումներն ու տեսակետները: Դրանք հիմնականում ստացվում են այնպիսի տեղեկատվական աղբյուրներից, ինչպիսիք են՝ սոցիոլոգիական հետազոտությունները, հասարակական կարծիքի ուսումնասիրությունները, հարցումները, հարցազրույցները, ֆոկլուս խմբային քննարկումները, ներգրավված դիտարկումը:

Ընդունված է քանակական ցուցանիշներն անվանել «կոշտ» կամ «օբյեկտիվ», իսկ որակականը՝ «փափուկ» կամ «սուբյեկտիվ»:

Իրականում ցուցանիշների այս երկու տեսակները լրացնում են մեկը մյուսին՝ հնարավորություն ընձեռելով իրականացնել առավել արդյունավետ մշտադիտարկում և գնահատում: Սա հիմնավորվում է նրանով, որ դրանք կարող են հաստատել կամ մատնացույց անել իրար հետ խաչվող հիմնախնդիրները:

Ընդհանրապես, ցուցանիշները՝ որպես սոցիալական շարժի չափման գործիքներ, նպաստում են համապատասխան ոլորտների նպատակային ծրագրերի մշակմանը: Գենդերային հիմնահարցերով զբաղվող մասնագետներն ընդգծում են, որ բավական երկար ժամանակ տարբեր ոլորտներում կիրառվող ցուցանիշները հնարավորություն չէին տալիս ճիշտ վերլուծություն կատարել, քանի որ շատ հաճախ անտեսվում էր կնոջ գործոնը: Կյս լուրջ բացթողումը նկատվում էր ողջ աշխարհում և բացատրվում որոշումների ընդունման մակարդակում տղամարդկանց բարձր ներկայացվածությամբ, որոնք ցանկացած հիմնահարցը լուծում էին «տղամարդիկ տղամարդկանց համար» սկզբունքով:



Գենդերային զգայուն ցուցանիշները ոչ թե վերջնական նպատակ են այլ չափողգործիք:

Գեոդերային վերլուծության համար, նախևառաջ, անհրաժեշտ է հավաքագրել համայնքի բնակչության բոլոր խմբերին հնարավորինս ամբողջովին նկարագրող գեոդերային տարաբաժանված տվյալներ, ինչպիսիք են, մասնավորապես՝

1 Համայնքի գեոդերային կազմը

- համայնքում բնակվող կանանց և տղամարդկանց թիվը (%):

2 Բնակչության տարիքային կազմը՝

- 0-6 տարեկանները (աղջիկ/տղա, %)
- 6-18 տարեկանները (աղջիկ/տղա, %)
- 18-63 տարեկանները (կին/տղամարդ, %)
- 63-ից բարձր տարեկանները (կին/տղամարդ, %)

3 Հատուկ կարիքներ ունեցող (խոցելի) խմբերը՝

- Նպաստառու ընտանիքները (կին գլխավորով և տղամարդ գլխավորով նպաստառու ընտանիքների թիվը, %-ն ընդհանուրի մեջ)
- Հաշմանդամություն ունեցող անձինք (աղջիկ/տղա, կին/տղամարդ, բացարձակ թիվը և/կամ %)
- Ժամանակավոր կացարանում ապրողները (կին/տղամարդ, բացարձակ թիվը և/կամ %)
- Միայնակ կենսաթոշակառուները (կին/տղամարդ, բացարձակ թիվը և/կամ %)
- Կենսաթոշակառուները (կին/տղամարդ, բացարձակ թիվը և/կամ %)
- Բազմազավակ ընտանիքների թիվը
- Միաձուռ երեխաները (աղջիկ/տղա, բացարձակ թիվը և/կամ %):



Վերը նշված տվյալները կարելի (հնարավոր է) ստանալ.

- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից (տվյալները թարմացվում են տարին 2 անգամ),
- համայնքի տնտեսական գրքերից,
- համայնքի հարկերի բազայից,
- բնակչության ռեգիստրից,
- զբաղվածության տարածքային կենտրոններից (կամ **employment.am** կայքից),
- սոցիալական աջակցության տարածքային մարմիններից,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (կամ **mlsa.am**, **ssss.am**, **hhbsp.am** կայքերից),
- ՀՀ վիճակագրական կոմիտեից (կամ **armstat.am** կայքից)
- մարզպետարանից:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Բացի վերը նշված տվյալներից, գենդերային վերլուծության համար անհրաժեշտ է հավաքագրել **Նաև 1,2,3,4,5,6 Հավելվածների աղյուսակներում** ներկայացված տվյալներն ու տեղեկատվությունը:

Համապատասխան տվյալներն ու տեղեկատվությունը համայնքապետարանները (ՏԱՊ-ի մշակման պատասխանատուները) պետք է սկսեն հավաքագրել տարվա սկզբից (փետրվար-մարտ ամիսներից) կամ գոնե բուն ՏԱՊ-ի մշակման աշխատանքները սկսելուց առնվազն 2-3 ամիս առաջ, որպեսզի հասցնեն վերլուծել հավաքագրված տվյալները՝ հասցեական (գենդերագայուն) ծրագրեր մշակելու և/կամ առաջարկվող այլ ծրագրերի հնարավոր (դրական թե՛ բացասական) ազդեցությունը բնակչության տարբեր խմբերի վրա հաշվարկելու համար:

2.3. Գենդերային վերլուծության արդյունքների ներառումը ՏԱՊ-ում

- > **«Ներածություն» բաժնում** պետք է ընդգրկվեն բնակչությանը վերաբերող վերը նշված բոլոր տվյալները, ինչպես նաև նկարագրվեն բոլոր այն նոր ծրագրերը, որոնք համայնքապետարանը պլանավորում է իրականացնել գալիք տարում՝ շեշտը դնելով հատկապես այն հանգամանքի վրա, թե ինչպիսի ազդեցություն դրանք կունենան թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց, և թե՛ խոցելի խմբերի վրա:
- > **«Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները» աղյուսակի «Ցուցանիշներ» սյունակում** անհրաժեշտ է ավելացնել նոր ցուցանիշներ, օրինակ՝ «գործազուրկության մակարդակ (%), այդ թվում՝ կին/տղամարդ (%)», «գյուղատնտեսության ոլորտում զբաղվածներ (հոգի և/կամ %), այդ թվում՝ կայանք/տղամարդիկ (հոգի և/կամ %))» և «ոչ գյուղատնտեսության ոլորտներում զբաղվածներ (հոգի և/կամ %), այդ թվում՝ կայանք/տղամարդիկ (հոգի և/կամ %))», «համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատողների թիվը, այդ թվում՝ կայանք/տղամարդիկ (հոգի և/կամ %))»: Նույն աղյուսակի «Ելակետային արժեք» և «Թիրախային արժեք» սյունակների բոլոր տվյալները տարանջատել/տարաբաժանել ըստ սեռի՝ կին/տղամարդ:
- > **«Համայնքի ոլորտային նպատակները» աղյուսակի «Վերջնական արդյունքի» բաժնի «Ցուցանիշ» սյունակում** բոլոր նշված ոլորտներին առնչվող տվյալները, հնարավորության սահմաններում, հարկավոր է տարանջատել/տարաբաժանել ըստ սեռի: Օրինակ՝ «Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայությունների որակից, %, որից՝ կին/տղամարդ, %» կամ «Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, %, որից՝ կին/տղամարդ, %» կամ «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող անապահով ընտանիքների ուսանողների թիվը, որոնց ուսման վարձը մասնակի վճարում է համայնքապետարանը, այդ թվում՝ աղջիկ, % և տղա, %»

- > Եթե համայնքապետարանը նախատեսում է ՏԱՊ-ի շրջանակներում իրականացնել որևէ նոր (գենդերազգայուն) ծրագիր և դրա համար ունի համապատասխան միջոցներ, ապա այն կարելի է ընդգրկել **«ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով» աղյուսակում**, իսկ եթե ծրագրի համար այս պահին բացակայում են անհրաժեշտ միջոցները, ապա՝ **«ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով»** աղյուսակում:
- > **«ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների» աղյուսակում**՝ ըստ ոլորտների նախատեսվող ծրագրերի ներկայացումը պետք է ներառի ծրագրի ամփոփ նկարագիրը, նպատակները, արդյունքային ցուցանիշները՝ նաև կանանց և տղամարդկանց վրա ազդեցության տեսանկյունից, այդ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրները, ծրագրի իրականացման և ցուցանիշների հավաքագրման պատասխանատուները, ծրագրի իրականացման ժամկետները, իրականացմանը խանգարող ռիսկերը:



Գենդերազգայուն փորձնական ծրագրեր իրականացնելու համար նպատակահարմար է ընտրել ՏԱՊ-ում ընդգրկված և համայնքի համար զգալի նշանակություն ունեցող հետևյալ 5 ոլորտները՝

- ✓ քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,
- ✓ մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ,
- ✓ սոցիալական պաշտպանություն,
- ✓ գյուղատնտեսություն,
- ✓ առևտուր և ծառայություններ:

2.4. Մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման փուլ

Ցուցանիշների նկատմամբ ներկայացվող պահանջները հատկապես կարևոր են ոլորտային ծրագրերի իրականացման արդյունավետության մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման համար:

Յուրաքանչյուր ոլորտի համար անհրաժեշտ է մշակել թե՛ քանակական, և թե՛ որակական արդյունքային ցուցանիշներ, որոնք, իրենց հերթին, ներառում են Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) և ելքային ցուցանիշներ **(սման ցուցանիշների օրինակները ներկայացված են Հավելվածներ 7-8-ում)**:

Ամեն ցուցանիշի համար հարկավոր է նշել հավաքագրման աղբյուրը և հավաքագրման համար պատասխանատու կառույցը կամ անձանց, օրինակ.




- ՏԻՄ աշխատակազմը
- Ճրագրի գնահատման համակարգը
- ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվությունները
- քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և խմբերը
- բնակիչները:

Առաջարկվող ցուցանիշների հավաքագրումը ենթադրում է արդեն գոյություն ունեցող ձևերի որոշակի փոփոխություն կամ լրացում, ինչպես նաև նոր ցուցանիշների հավաքագրման համար հետազոտությունների անցկացում:

Առաջարկվող ձևաչափի շրջանակներում գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցանիշների հավաքագրումը ոչ միայն հնարավորություն կտա ճիշտ պատկերացում կազմելու համայնքում գենդերային իրավիճակի շարժընթացի փոփոխության վերաբերյալ, այլև կնպաստի համայնքային կյանքի տարբեր ոլորտներում գենդերային զգայուն քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:





ԱՄՓՈՓՈՒՄ





Այսպիսով, ամփոփենք ՏԱՊ-երում գենդերային վերլուծության ներառման քայլերի հաջորդականությունը (շրջափուլերը):

Փուլ I. Նախապատրաստական աշխատանքներ



1. Ծանոթացում ՏԱՊ-ի բաժինների հետ:
2. Մասնակցայնության ապահովում՝ հասարակական կազմակերպությունների, տարբեր բնագավառների մասնագետների/փորձագետների, ՉԼՄ-ների և բնակիչները տարբեր խմբերի ներգրավում՝ ՏԱՊ-երի հասցեական մշակման համար անհրաժեշտ (գենդերային տարաբաժանված) տվյալներ հավաքագրելու գործում:
3. Համագործակցության ձևաչափի կանխորոշում (համատեղ աշխատանքային խմբերի և/կամ հանձնաժողովների ձևավորում, հանրային լսումների անցկացում, ֆոկլուս խմբային քննարկումների կազմակերպում, այլ):

Փուլ II. Գենդերային վերլուծության իրականացում



1. Գենդերային վերլուծության համար անհրաժեշտ գենդերային վիճակագրությունն ապահովելու նպատակով՝ առավել արդիական և արդյունավետ է գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցանիշների կիրառումը:
2. Գենդերային վերլուծության համար, նախևառաջ, անհրաժեշտ է հավաքագրել համայնքի բնակչությունը նկարագրող գենդերային տարաբաժանված տվյալներ, ինչպիսիք են, մասնավորապես՝
 - համայնքի գենդերային կազմը
 - բնակչության տարիքային կազմը
 - հատուկ կարիքներ ունեցող (խոցելի) խմբերը:
3. Վերը նշված տվյալները կարելի/հնարավոր է ստանալ.
 - ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից (տվյալները թարմացվում են տարին 2 անգամ),
 - համայնքի տնտեսական գրքերից,
 - համայնքի հարկերի բազայից,
 - բնակչության ռեգիստրից,
 - զբաղվածության տարածքային կենտրոնից (կամ **employment.am** կայքից),
 - սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից,
 - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (կամ **mlsa.am**, **ssss.am**, **hhbsp.am** կայքերից),
 - ՀՀ վիճակագրական կոմիտեից (կամ **armstat.am** կայքից)
 - մարզպետարանից:

4. Բացի վերը նշված տվյալներից, անհրաժեշտ է նաև հավաքագրել 6 աղյուսակներում նախանշված տեղեկատվությունը (**տե՛ս Հավելվածներ 1-6-ը**):
5. Համապատասխան տվյալները համայնքապետարանները (ՏԱՊ-ի մշակման պատասխանատուները) պետք է սկսեն հավաքագրել տարվա սկզբից (փետրվար-մարտ ամիսներից) կամ գոնե ՏԱՊ-ի մշակման աշխատանքները սկսելուց առնվազն 2-3 ամիս առաջ:

Փուլ III.

Գեղդերային վերլուծության արդյունքների ներառումը ՏԱՊ-ում

Գեղդերային վերլուծության արդյունքները /գեղդերային ցուցանիշները/ հարկավոր է ներառել ՏԱՊ-ի հետևյալ բաժիններում.



- **«Ներածություն» բաժնում:**
- **«Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները» աղյուսակի «Ցուցանիշներ» սյունակում:**
- **Նույն աղյուսակի «Ելակետային արժեք» և «Թիրախային արժեք» սյունակներում** բոլոր տվյալները տարանջատել/տարաբաժանել ըստ սեռի՝ կին/տղամարդ:
- **«Համայնքի ոլորտային նպատակները» աղյուսակի «Վերջնական արդյունքի» «Ցուցանիշ» սյունակում** բոլոր նշված ոլորտներին առնչվող տվյալները, հնարավորության սահմաններում, հարկավոր է տարանջատել/տարաբաժանել ըստ սեռի:
- Եթե նախատեսվում է իրականացնել որևէ նոր (գեղդերագալյուն) ծրագիր և դրա համար կան համապատասխան միջոցներ, ապա այն կարելի է ընդգրկել **«ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով» աղյուսակում**, իսկ եթե ծրագրի համար այս պահին բացակայում են անհրաժեշտ միջոցները, ապա՝ **«ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով»** աղյուսակում:
- **«ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների» աղյուսակում**՝ ըստ ոլորտների նախատեսվող ծրագրերի ներկայացումը պետք է ներառի ծրագրի ամփոփ նկարագիրը, նպատակները, արդյունքային ցուցանիշները՝ նաև կանանց և տղամարդկանց վրա ազդեցության տեսանկյունից, այդ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրները, ծրագրի իրականացման և ցուցանիշների հավաքագրման պատասխանատուները, ծրագրի իրականացման ժամկետները, իրականացմանը խանգարող ռիսկերը:
- Գեղդերագալյուն ծրագրեր իրականացնելու համար նպատակահարմար է ընտրել համայնքի համար զգալի նշանակություն ունեցող հետևյալ 5 ոլորտները՝
 - ✓ քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,
 - ✓ մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ,
 - ✓ սոցիալական պաշտպանություն,

- ✓ գյուղատնտեսություն,
- ✓ առևտուր և ծառայություններ:


Փուլ IV.

Մշտադիտարկում և գնահատում



1. Յուրաքանչյուր ոլորտի համար անհրաժեշտ է մշակել ճրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) և ելքային ցուցանիշներ (թե՛ քանանակական, և թե՛ որակական):
2. Ամեն ցուցանիշի համար հարկավոր է նշել հավաքագրման աղբյուրը, հավաքագրման պարբերականությունը և հավաքագրման համար պատասխանատու կառույցը կամ անձանց:





ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Գենդերային հավասարությունը՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավական կարգավիճակն ու դրա իրականացման համար հավասար հնարավորություններն են, որոնք հնարավորություն են ընձեռում անձանց, անկախ սեռից, ազատորեն օգտագործելու իրենց ունակությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար: Գենդերային հավասարությունը տղամարդկանց և կանանց հավասար իրավական կարգավիճակ է, այլ ոչ թե հավասար ֆիզիոլոգիական վիճակ:



Համալիր մոտեցում գենդերային հավասարության հիմնախնդրին (մեյնսթրիմինգ)՝ ռազմավարություն, որի միջոցով կանանց և տղամարդկանց շահերը դառնում են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակույթի կամ հասարակական կյանքի այլ ոլորտներում իրավական ակտերի, քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների մշակման, կատարման, մշտադիտարկման և գնահատման գործընթացի անքակտելի բաղադրիչը, որն ուղղված է կանանց և տղամարդկանց միջև անհավասարության վերացմանը:



Գենդերային հեռանկարը՝ տեսլական, որը թույլ է տալիս հասկանալ և վերլուծել այնպիսի բնութագրեր, որոնք կանանց և տղամարդկանց սահմանում են հատուկ ձևերով, ներառյալ նրանց նմանություններն ու տարբերությունները:



Գենդերային չեզոք քաղաքականությունը՝ քաղաքականություն, որը հիմնված է այն պնդման վրա, որ ցանկացած անձ, անկախ սեռից, հավասարապես է կրում իր վրա քաղաքականության, ծրագրերի և օրենսդրության ազդեցությունը: Ըստ էության, նման քաղաքականությունն անտեսում է կանանց և տղամարդկանց ֆիզիկական, սոցիալական, տնտեսական տարբեր բնութագրերն ու կյանքի փորձը:



Գենդերային վիճակագրությունը՝ սեռային բաշխմամբ վիճակագրությունն է, որն արտացոլում է սոցիալ-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց համապատասխան դիրքը և հասարակության մեջ առկա գենդերային հիմնախնդիրներն ու հարաբերությունները: Այն գենդերային զգայուն ցուցանիշների ամբողջությունն է, որն ունի յուրահատուկ գործառնություն՝ հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների բացահայտում կապված ժամանակի ընթացքում իրականացվող գենդերային փոփոխությունների հետ: Նման ցուցանիշների օգտակարությունը պայմանավորված է նրանով, որ դրանք մատնանշում են ժամանակի ընթացքում հասարակությունում կանանց և տղամարդկանց կարգավիճակի մեջ տեղի ունեցող փոփոխությունները:








Գենդերային վերլուծությունը՝ հասարակության մեջ կանանց և տղամարդկանց կարգավիճակի վրա՝ հասարակական կյանքի համապատասխան ոլորտներում գործող կամ նախաձեռնվող ծրագրերի, իրավական ակտերի, պետական քաղաքականության տարբեր ներգործությունների գնահատման գործընթացն է:

	<p>Ոլորտներ</p>	<p>Կին (քանակ/տոկոս)</p>  <ul style="list-style-type: none"> > Օրը քանի ժամ են աշխատում: > Ինչ ռիսկի են դիմում (առողջական, ֆիզիկական, հոգեբանական/հոգեկան, իրավական՝ գրանցված աշխատող են, թե՛ չգրանցված, և այլն) 	<p>Տղամարդ (քանակ/տոկոս)</p>  <ul style="list-style-type: none"> > Օրը քանի ժամ են աշխատում: > Ինչ ռիսկի են դիմում (առողջական, ֆիզիկական, հոգեբանական/հոգեկան, իրավական՝ գրանցված աշխատող են, թե՛ չգրանցված, և այլն) 	<p>Տվյալների հավաքարման աղբյուր</p>
	<p>Կրթություն (մանկապարտեզ, նախակրթարան, դպրոց)</p>			<p>Համայնքապետարան, մարզպետարան, «գործողությունների» քարտեզի կիրառում¹</p>
	<p>Առողջապահություն (ամբուլատորիա, հիվանդանոց)</p>			<p>Համայնքապետարան, մարզպետարան, «գործողությունների» քարտեզի կիրառում</p>
	<p>Գյուղատնտեսություն (այգեգործություն, հողագործություն, անասնապահություն, ֆերմերային տնտեսություն)</p>			<p>Տնտեսական գրքեր, հարկերի բազա, «գործողությունների» քարտեզի կիրառում</p>
	<p>Ծառայություններ (հյուրանոցներ, հանրային սնունդ)</p>			<p>Տնտեսական գրքեր, հարցումներ համապատասխան կազմակերպություններին, «գործողությունների» քարտեզի կիրառում</p>
	<p>Տրանսպորտ, կապ, ՏՏ</p>			<p>Տնտեսական գրքեր, հետազոտություն բնակչության շրջանում, «գործողությունների» քարտեզի կիրառում</p>
	<p>Կոմունալ-կենցաղային, ջրամատակարարում</p>			<p>Համայնքապետարան, «գործողությունների» քարտեզի կիրառում</p>
	<p>Շինարարություն</p>			<p>Տնտեսական գրքեր, «գործողությունների» քարտեզի կիրառում</p>

¹ Քարտեզավորումն արդյունավետ մեթոդ է բացահայտելու, թե ինչպես են բնակիչները տեսնում իրենց իսկ համայնքը: Մասնավորապես, «գործողությունների» քարտեզի կազմումը թույլ կտա հասկանալու, թե համայնքի բնակիչները ուր են գնում և ինչով են գբաղվում: Stu՝ Participatory Research Guide. «Women Empowerment and Gender Equality» Program, UNDP.















	Ոլորտներ	 Կին (քանակ/տոկոս)	 Տղամարդ (քանակ/տոկոս)	Տվյալների հավաքարման աղբյուր
	Հարկային, մաքսային, բանկային			Տնտեսական գրքեր, հարցումներ համապատասխան կազմակերպություններին, «գործողությունների» քարտեզի կիրառում
	Հանքարդյունաբերություն (հանքափոր, գրասենյակային աշխատանք)			Հարցումներ հանքարդյունաբերությամբ զբաղվող կազմակերպություններին, «գործողությունների» քարտեզի կիրառում
	Չբուսաշրջային ծառայություններ			Հարցումներ համապատասխան կազմակերպություններին, «գործողությունների» քարտեզի կիրառում
	Անվտանգության ապահովում			Համայնքապետարան, «գործողությունների» քարտեզի կիրառում
	ՏԻՄ			Համայնքապետարան
	Սոցիալական ծառայություններ			Հարցումներ համապատասխան կազմակերպություններին, «գործողությունների» քարտեզի կիրառում
	Այլ			«Գործողությունների» քարտեզի կիրառում

	<p>Ոլորտներ</p>	<p>Կին (քանակ/տոկոս)</p>  <ul style="list-style-type: none"> > Օրը քանի ժամ են աշխատում: > Ինչ ռիսկի են դիմում (առողջական, ֆիզիկական, հոգեբանական/ հոգեկան, իրավական՝ գրանցված աշխատող են, թե չգրանցված, և այլն) 	<p>Տղամարդ (քանակ/տոկոս)</p>  <ul style="list-style-type: none"> > Օրը քանի ժամ են աշխատում: > Ինչ ռիսկի են դիմում (առողջական, ֆիզիկական, հոգեբանական/ հոգեկան, իրավական՝ գրանցված աշխատող են, թե չգրանցված, և այլն) 	<p>Տվյալների հավաքարման աղբյուր</p>
	<p>Տնային աշխատանք</p>			<p>Հետազոտություն բնակչության շրջանում («Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառմամբ¹), ֆոկուս խմբային քննարկումներ</p>
	<p>Երեխայի հետ դասապատրաստում</p>			<p>Հետազոտություն բնակչության շրջանում («Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառմամբ), ֆոկուս խմբային քննարկումներ</p>
	<p>Վերանորոգում (կահույք, տարածք)</p>			<p>Հետազոտություն բնակչության շրջանում («Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառմամբ), ֆոկուս խմբային</p>
	<p>Երեխաների / ծերերի / հաշմանդամների խնամք</p>			<p>Հետազոտություն բնակչության շրջանում («Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառմամբ), ֆոկուս խմբային քննարկումներ</p>
	<p>Կամավոր աշխատանք</p>			<p>Հետազոտություն բնակչության շրջանում («Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառմամբ), ֆոկուս խմբային քննարկումներ</p>
	<p>Տնամերձ հողամասի մշակում</p>			<p>Հետազոտություն բնակչության շրջանում («Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառմամբ), ֆոկուս խմբային քննարկումներ</p>



¹ «Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառումը կօգնի հավաքագրել համայնքի կանանց և տղամարդկանց առօրյային վերաբերող տեղեկատվություն, թույլ կտա հասկանալու, թե ինչ են նրանք անում օրվա ընթացքում (հատկապես՝ չվարձատրվող աշխատանքի մասով), ինչքան ժամանակ են դրա վրա ծախսում: Տես՝ Participatory Research Guide. «Women Empowerment and Gender Equality» Program, UNDP.



	Ոլորտներ	 Կին (քանակ/տոկոս)	 Տղամարդ (քանակ/տոկոս)	Տվյալների հավաքարման աղբյուր
	Աշխատավարձ			Տնտեսական գրքեր
	Գյուղատնտեսական գործունեությունից / գյուղապրանքների արտադրությունից և վաճառքից ստացվող			Հարկերի բազա, հետազոտություն բնակչության շրջանում
	Սեփական բիզնես			Համայնքապետարան, հետազոտություն բնակչության շրջանում
	Սոցիալական նպաստներ (երեխայի խնամքի նպաստ, ընտանեկան նպատ)			Սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից, misa.am կայքից
	Կենսաթոշակ			Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
	Խնայողություններ			Հետազոտություն բնակչության շրջանում
	Գույքի վարձակալությունից ստացած			Տնտեսական գրքեր, հարկերի բազա, հարցում բնակչության շրջանում
	Օգնություն բարեկամներից և ընկերներից			Հարցում բնակչության շրջանում
	Օգնություն բարեգործական կազմակերպություններից			Հետազոտություն բնակչության շրջանում
	Դրսից դրամական փոխանցումներ			Հարցում բնակչության շրջանում












- > Ի՞նչ են անում խոցելի խմբերի (տարեցներ, հաշմանդամներ, սոցիալապես անապահով ընտանիքներ) ներկայացուցիչները:
- > Ինչո՞վ է դա տարբերվում մյուսների արածից:














Ոլորտներ	 Կին (քանակ/տոկոս)	 Տղամարդ (քանակ/տոկոս)	Տվյալների հավաքարման աղբյուր
			<p>Նշված խմբերի ներկայացուցիչների շրջանում հետազոտության անցկացում՝ հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, «Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառում¹:</p> <p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սոցիալական աջակցության տարածքային գործակալություն, ՀԿ-ներ:</p> <p>«Գործողությունների» քարտեզի կիրառում:</p>

¹ «Կյանքի մեկ օրը» գործիքի կիրառումը կօգնի հավաքագրել համայնքի խոցելի խմբերի առօրյային վերաբերող տեղեկատվություն, թույլ կտա հասկանալու, թե ինչ են նրանք անում օրվա ընթացքում, ինչքան ժամանակ են դրա վրա ծախսում, ինչ և ինչքան են դրա դիմաց ստանում (եթե ստանում են):
 Sten* Participatory Research Guide. «Women Empowerment and Gender Equality» Program, UNDP.




